200	Հատ	Մանկական գործած սվիտեր		4022.00	
120	Զույգ	Կոշիկ		4027.20	
36	Հատ	Գնդակ		188.28	
150	ք/մ	Պատի ծածկույթ		393.00	
80	Հատ	Սվիտեր		4028.80	Մ-007-Ս Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում
350	Հատ	Շապիկ		6457.50	
300	Հատ	Տաբատ		11817.00	
100	Հատ	Բլուզկա		3540.00	
15	Զույգ	Գուլպա		66.45	
80	Հատ	Վերնաշապիկ		2653.60	
20	Կոմպ.	Սպորտային համազգեստ		812.00	
168	Հատ	Մանկական բլուզկա		2723.28	
96	Հատ	Մանկական տաբատ		1585.92	
200	Հատ	Մանկական գործած սվիտեր		4022.00	
120	Զույգ	Կոշիկ		4027.20	
36	Հատ	Գնդակ		188.28	
150	ք/մ	Պատի ծածկույթ		393.00	
80	Հատ	Սվիտեր		4028.80	Մ-010-Ս Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում
350	Հատ	Շապիկ		6457.50	
300	Հատ	Տաբատ		11817.00	
100	Հատ	Բլուզկա		3540.00	
16	Հատ	Կիսավարտիք		134.24	
15	Զույգ	Գուլպա		66.45	
80	Հատ	Վերնաշապիկ		2653.60	
20	Կոմպ.	Սպորտային համազգեստ		812.00	
168	Հատ	Մանկական բլուզկա		2723.28	
72	Հատ	Մանկական տաբատ		1189.44	
200	Հատ	Մանկական գործած սվիտեր		4022.00	
120	Զույգ	Կոշիկ		4027.20	
36	Հատ	Գնդակ		188.28	
150	ք/մ	Պատի ծածկույթ		393.00	
50	Հատ	Սվիտեր		2518.00	Մ-005-Ս Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության
200	Հատ	Շապիկ		3690.00	
180	Հատ	Տաբատ		7090.20	
80	Հատ	Բլուզկա		2832.00	
15	Զույգ	Գուլպա		66.45	



40	•Հատ	Վերնաշապիկ		1326.80	Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում ՈՒ-12/3.5
2Պ	Կոմպ.	Մպորտային համազգեստ		812.00	
120	Հատ	Մանկական բլուզկա		1945.20	
48	Հատ	Մանկական տաբատ		792.96	
100	Հատ	Մանկական գործած սվիտեր		2011.00	
70	Ձույգ	Կոշիկ		2349.20	
36	Հատ	Գնդակ		188.28	
238	Հատ	Սվիտեր		11946.94	Մ-004-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Երեվանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջանում
846	Հատ	Շապիկ		15608.70	
672	Հատ	Տաբատ		26470.08	
250	Հատ	Բլուզկա		8850.00	
15	Ձույգ	Գուլպա		66.45	
114	Հատ	Վերնաշապիկ		3781.38	
89	Կոմպ.	Մպորտային համազգեստ		3613.40	
360	Հատ	Մանկական բլուզկա		5835.60	
192	Հատ	Մանկական տաբատ		3171.84	
100	Հատ	Մանկական գործած սվիտեր		2011.00	
70	Ձույգ	Կոշիկ		2349.20	
72	Հատ	Գնդակ		376.56	
5400	Հատ	Բժշկական դիմակ		5231.56	
1800	Հատ	Թղթե յալաթ		5769.78	
ԸՆԴԱՄԵՆԸ			8620	497 625.00	





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ- 757 - Ա
քաղ. Երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N Մ-1169-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12524-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱԱ/3-4/10191-12 եզրակացությունները, որ ու - 2 ու մ է:

1. Սահմանել, որ «Վորլդ ՎիՃն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 17-ի «Վորլդ ՎիՃն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում նախադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և երեխաների համար ժամանցի հնարավորությունների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1169-Ա (2012 թվականի հունիսի 27-ի N Մ-579-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալֆինո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09408801) 2012 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված՝ N WVA/KAP ADP/CW-12/005 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադրամադրարկի կառուցում՝ 8717515 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ - 758 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12517-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/10192-12 եզրակացությունները, **ո Ր Ո շ ՈՒ Մ է**.

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարիկ Մնացականյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 43053135) 2012 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահակատան և սանհանգույցի կառուցում՝ 3095306.70 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՄԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ս. ՄԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ - 759 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N Մ-659-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12527-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱԱ/3-4/10190-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Զատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցման նախագծում» ծրագրի մասին» N Մ-059-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշման 1-ին և ծրագրի 5-րդ կետում «1600000 դրամ» բառերը փոխարինել «1605000 դրամ» բառերով.

2) ծրագրի 9-րդ կետում «100000 դրամ» բառերը փոխարինել «105000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Է. Կ. Պ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543457) 2012 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված՝ N 43 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծի փորձաքննություն՝ 105000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հոկտեմբերի 2012 թվականի N Մ- 760 -Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի սեպտեմբերի 28-ի նիստին)
քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/12571-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 02/5958-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 1-ի N 01/7.1/3985-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 28-ի N ՎՄ/3-4/10308-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 01/12.1/3109-12 եզրակացությունները, **ո ղ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 93327 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Օշական գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2012 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների

իրականացում՝ 93327 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի




Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Օշական գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում
Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել Արագածոտնի մարզի Օշական գյուղի երաժշտական դպրոցի շենքը՝ նպաստելով դպրոցում ուսանող 50 աշակերտների կրթական պայմանների բարելավմանը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին») Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3. Բարեգործը	ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ
4. Ծրագիրը կատարողը	ԱՄՆ-ի ՀՀՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Օշական, Դպրոցականների փ., 28: Բնագավառը՝ կրթական:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 93,327 (իննսուներեք հազար երեք հարյուր քսանյոթ) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Օշականի երաժշտական դպրոց ՊՈԱԿ
8. Ծրագրի իրականացման տևողությունը	20.09.2012 – 30.04.2013
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամփոփելիս ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Արագածոտնի մարզի Օշական գյուղի երաժշտական դպրոցի շենքը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 93,327 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում:
10. Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 93,327 (իննսուներեք հազար երեք հարյուր քսանյոթ) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 20.09.2012թ «Կանակա» ԲԲԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ

12/5.1

	օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք. Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Արագածոտնի մարզպետարան, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՀՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով:



12/5.1

✓



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-761-Ա
քաղ. երևան**


**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 3/3.8-2/12129-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 1/06/7242-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N ՎՄ/3-6/10018-12 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված սննդային հավելումի ու պլաստիկ շշերի (3 տեղ, 24 կգ ընդհանուր քաշով, 544.36 անգլիական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 232.9 անգլիական ֆունտ ստեռլինգ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Վ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-762-Ա
քաղ. երևան**


**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 3/3.8-2/12018-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1/06/708-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N ՎՄ/3-6/9869-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել էվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված հագուստի ինքնակալչուն լոգոների (մեկ տեղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 920 էվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 95 էվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) և սննդային հավելումի (8 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 1587.43 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 443.20 բրիտանական ֆունտ ստեռլինգ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-763-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-079-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 3/3.8-2/12000-12 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի 13-ի N ՎՄ/3-6/9820-12
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-
դրամի կողմից ձեռք բերված քիմիական նյութը (մեկ տեղ, 0.6 կգ ընդհանուր քաշով, 314.10
եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 225 եվրո փոխադրման
ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետր-
վարի 3-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից
իրականացվող «2013-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության
գիտական ենթակառուցների պահպանման և հետագա զարգացման աջակցություն»
ծրագրի մասին» N Մ-079-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց
հանձնվելու են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի
«Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-764-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 3/3.8-2/12014-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի 12-ի N ՎՄ/3-6/9794-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ուկրաինայի քաղաքացի Խաչատուր Միրզախանյանի կողմից ձեռք բերված և «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կահույքը (1265 տեղ, 26840 կգ ընդհանուր քաշով, 72239 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 17400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցման և հագեցման» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-131-Ա և հուլիսի 27-ի N Մ-560-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-765-Ա
քաղ. երևան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/12182-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/10012-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ն. Հ. Միաձույլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03527991) 2012 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N 01-07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 300 մակնիշի բետոնի մատակարարում՝ 643500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՄԻԱԶՈՒԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-766-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/12181-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N ՎՄ/3-4/10007-12 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի «գ» ենթակետում «մինչև 2011թ. հուլիս» բառերը փոխարինել «մինչև 2012թ. նոյեմբեր» բառերով, իսկ 10-րդ կետում «2010-2011 թվականների» բառերը՝ «2010-2012 թվականների» բառերով:


2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄՊԻՏԱԿ ՏՆԱԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00064815) 2012 թվականի օգոստոսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ստորգետնյա ավտոկայանատեղի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 56004337 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


2) «ԳԿԲԷ-ԶՎԵԶԴԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02582403) 2012 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N 12/07/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ստորգետնյա ավտոկայանատեղի էլեկտրամատակարարման և հակահրդեհային համակարգերի սարքավորումների մատակարարման ու տեղակայման աշխատանքների իրականացում՝ 23652280 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-767-Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12522-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N 1/06/744-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՎՄ/3-6/10136-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Դանիայի Միջմշակութային ծրագրերի ասոցիացիայի (CCPA) կողմից Հայաստանում ֆուտբոլի զարգացման նպատակով իրականացվող Բաց զվարճալի ֆուտբոլային դպրոցներ միջոցառումների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (118 տեղ, 1400 կգ ընդհանուր քաշով, 18677.58 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-768-Ա
քաղ. երևան**

**ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12515-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՎՄ/3-6/10139-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Մինաս Ավետիսյանի «Հայկական հովվերգություն» որմնանկարի վերականգնման և Գյումրու քաղաքապետարանի շենք տեղափոխման նպատակով «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի միջոցով ձեռք բերված ու քաղաքապետարանի հասցեով ստացված վերականգնողական պարագաների և նյութերի (10 տեղ, 1168.02 կգ ընդհանուր քաշով, 17540.08 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4000 եվրո, «Շիրակի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Գյումրու քաղաքապետարանին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-769-Ա
քաղ. երևան**


**«ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12520-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՎՄ/3-6/10138-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Մինաս Ավետիսյանի «Հայկական հովվերգություն» որմնանկարի վերականգնման և Գյումրու քաղաքապետարանի շենք տեղափոխման նպատակով «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված վերականգնողական պարագաների և նյութերի (մեկ տեղ, 230 կգ ընդհանուր քաշով, 1277.30 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1113.20 եվրո, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ



**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-770-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-12519/-12 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի
N ՎՄ/3-6/10141-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից ձեռք բերված էլեկտրական հոսանքի փոխանցատիչներն ու մետաղյա
վահանակը (3 տեղ, 1478 կգ ընդհանուր քաշով, 55820 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 877.38 ԱՄՆ-ի դոլար, «ՄՃՓ» ՏՄ) ներ-
մուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի ֆուտբոլի
ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Հրազդան»
կենտրոնական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում (առաջին փուլ)
ծրագրի մասին» N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և ~~Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական~~
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-771-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12521-12 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի
N ՎՄ/3-6/10137-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից ձեռք բերված լուսադիողային էկրանները (2 հատ՝ 50 տեղ, 9000 կգ
ընդհանուր քաշով, 330000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման
ծախսերը կազմել են 5302000 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձ-
նաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրա-
վաբանական անձանց միության կողմից իրականացվող «Հրազդան» կենտրոնական
մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում (առաջին փուլ)» ծրագրի մասին»
N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-772-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-2/12516-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N ՖՔ/ԱՆՄ-5/6636-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ՎՄ/3-6/10134-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրինձը (700 տեղ, 14070 կգ ընդհանուր քաշով, 28360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5400 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա որոշումներով խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Բեռի բաշխման ցանկ

Ինվոյս 01976 31.07.2012թ.

N N	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Տահաբանողը ըստ մարզերի	Հահարումների քանակը	Կրճեղ ըստ փաթեթերի (ԱՄՆ-ի դոլար)
1	Բրինձ	կգ	14000	Գեղարքունիքի մարզ	74	484
				Արմավիրի մարզ	164	1,073
				Արարատի մարզ	73	478
				Արցախի մարզ	81	530
				Վանան	188	1,230
				Կալավան	23	150
				Քարեկատ	6	39
				Չորուկանք	31	203
				Ամուտաննեջ	22	144
				Գավառ	61	399
				Թբուշոտ	81	530
				Արտաշատ	51	334
				Վերի	17	111
				Արտաշատ	16	105
				Վեստազատ	39	255
				Մրզանոշ	16	105
				Չարենցավան	13	85
				Մաշեքո	41	268
				Չորաբոլո	18	118
				Կրովան	38	249
				Վանանք	48	314
				Դիլիջան	15	98
				Խղան	18	118
					3201	20,941
					4335	28,350

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
 Գեղարքունիքի մարզի
 Հ. Ոսպարյան

20.12/3.2 ✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-773-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12528-12 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի
N ՎՄ/3-4/10189-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից (քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի
կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի
հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի
փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի
փետրվարի 3-ի N Մ-093-Ա և հունիսի 29-ի N Մ-505-Ա որոշումների խմբագրությամբ)
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Ար և Ար դիզայն քնսթաքչն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2012 թվականի
օգոստոսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնա-
շենքի ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի
սարքավորումների ու նյութերի մատակարարման և մոնտաժման աշխատանքների իրա-
կանացում՝ 34 միլիոնի արտով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ-774-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/12525-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/10185-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆթլայն ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098239) 2012 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N 1109-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագրային երկու տեսակի ծրագրային ապահովման ձեռքբերում՝ 221000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ- *775*
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵ-
ԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԿԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Առաքելություն
Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N 3/3.8-1/12343-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 25-ի N ՎՄ/3-4/10187-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա, 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա և 2012 թվականի օգոստոսի 31-ի N Մ-699-Ա որոշումների խմբագրություններով) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «ԿԻԱ Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01563753) 2012 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված՝ N 0176 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոմեքենաների մատակարարում՝ 14680000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02542882) 2012 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի մատակարարում՝ 2438190 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ԷԴ-ՍՊՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01834916) 2012 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սառցարանի մատակարարում՝ 235000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2012 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բուկլետների տպագրում՝ 128614 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ- 776 Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-496-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի օգոստոսի 31-ի N 381 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/11702-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N ՎՄ/3-4/9659-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հին վեհարանի շենքի նորոգում» ծրագրի մասին» N Մ-496-Ա որոշման մեջ (2012 թվականի հուլիսի 27-ի N Մ-613-Ա որոշման խմբագրությամբ) և նույն որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և նույն որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «477.462.090 դրամ» բառերը փոխարինել «548.202.790 դրամ» բառերով:

2) որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «477.462.090 դրամ» բառերը փոխարինել «526.985.790 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2012 թվականի N Մ- **777**-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-139-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ սուրբ Էջմիածին)


